ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ԱՍՏՂԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
ՈՐՈՇՈՒՄ N 28

30/04/2019

2002Թ. ԱՍՏՂԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ
ԱՆՀԱՏՈՒՅՑ ՏՐԱՄԱԴՐՎԱԾ , ՍԱԿԱՅՆ
ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՈՒՄ ՉՍՏԱՑԱԾ
ՀՈՂԱՄԱՍԸ ՀԱՆԳՈՒՅՑԱԼ ՍՈՒՍԱՆՆԱ
ԿՈՄԻՏԱՍԻ ԳԵՂԱՄՅԱՆԻ ԱՂՋԿԱՆ
ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՏԻՄ-ի մասին ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի , ՀՀ հողային օրենսգրքի 56-րդ հոդվածի 5-րդ մասի և 59-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջներով , հիմք ընդունելով ՀՀ Տարածքային Կառավարման և Զարգացման նախարարի 16.01.2018թ. թիվ 01/16.1/163-18 գրությունը , ՀՀ Կառավարությանն Առընթեր Անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի նախագահի գրությունը , ՀՀ Գեղարքունիքի մարզպետի գրությունը , ՀՀ Արդարադատության նախարարի գրությունը (ի կատարում ՀՀ Վարչապետի 19.12.2017թ. թիվ 02/24.9/27759-17 հանձնարարականի , Աստղաձոր համայնքի ղեկավարի 12.12.2017թ. ԱԳ-318 գրության համաձայն) ,Աստղաձոր համայնքի ավագանու 28.02.2018թ. թիվ 09 որոշումը և հանգուցյալ Սուսաննա Կոմիտասի Գեղամյանի ընտանիքի անդամների համաձայնագրերը.

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. 2002թ. Աստղաձոր համայնքում հանգուցյալ Սուսաննա Կոմիտասի Գեղամյանին (մահացած 20.03.2016թ.) անհատույց տրամադրված , սակայն պետական գրանցում չստացած 05-013-0126-0009 կադաստրային ծածկագրով , գ. Աստղաձոր 91-րդ փողոց 7 հացեում գտնվող 0.133 հա մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության , բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասը անհատույց օտարել հանգուցյալ Սուսաննա Կոմիտասի Գեղամյանի աղջկան՝ Սոնա Մանուկի Գեղամյանին (ծնվ. 26.08.1998թ.):
2. Առաջարկել Աստղաձոր համայնքի ղեկավարին կազմել համապատասխան

իրավահաստատող փաստաթղթեր և ներկայացնել ՀՀ ԱԳԿԿ Մարտունու սպասարկման գրասենյակ նշված հողամասին պետական գրանցում տալու համար , պետական գրանցման ընթացքում բոլոր ծախսերը կատարել շահառուի հաշվին:
3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմ -7 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱԼԵՔՍԱՆՅԱՆ ՏԻԳՐԱՆ

ԱՐԶՈՒՄԱՆՅԱՆ ՍԼԱՎԻԿ

ԱՐՇԱԿՅԱՆ ՏԻԳՐԱՆ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ՄԽԻԹԱՐ

ԴԱՎԵՅԱՆ ՄԱՆՎԵԼ

ԽԱՉԱՏՐՅԱՆ ԱՐՏՅՈՄ

ԿՆՅԱԶՅԱՆ ԳԱԳԻԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ՌՈԲԵՐՏ ԽԱՉԱՏՐՅԱՆ**